

**Բնակչության առողջության
ցուցանիշներ:
Ժողովրդագրության
(դեմոգրաֆիա) բժշկական
ասպեկտները**

Հանրային առողջության և առողջապահության
ամբիոն
2016

Հանրային առողջության ցուցանիշները

❖ Դեմոգրաֆիկ ցուցանիշներ.

- ծնելիություն
- մահացություն
- մանկական մահացություն
- մայրական մահացություն
- Կյանքի սպասվող միջին տևողություն և այլն:

Հանրային առողջության ցուցանիշները

❖ Հիվանդացության և հաշմանդամության ցուցանիշներ.

- առաջնային հիվանդացություն
- հիվանդելիություն
- ախտաբանական ախտահարվածություն
- առաջնային հաշմանդամություն և այլն:

❖ Ֆիզիկական զարգացման ցուցանիշներ.

- անտրոպոմետրիկ
- սոմատոսկոպիկ
- ֆիզիոմետրիկ

Հանրային առողջության գնահատման չափանիշները

Ըստ ԱՀԿ-ի

- ՀՆԱ-ի տոկոսը՝ առողջապահության կարիքների համար
- առաջնային բժշկա-սանիտարական օգնության մատչելիությունը
- անվտանգ ջրամատակարարմամբ բնակչության ընդգրկվածությունը
- իմունիդացիայի ընդգրկված անձանց տոկոսը
- մանկական սնուցման վիճակը

Հանրային առողջության գնահատման չափանիշները 2

Ըստ ԱՀԿ-ի

- ցածր զանգվածով ծնվածների տոկոսը (<2500գ)
- նորածնային մահացության մակարդակը
- կյանքի սպասվող միջին տևողության մակարդակը
- բնակչության հիգիենիկ կրթության մակարդակը
- որակավորված բուժօգնությամբ հղիների ապահովվածության մակարդակը

Ժողովրդագրություն կամ Դեմոգրաֆիա

- ❖ **Դեմոգրաֆիան** (հունարեն՝ demos- ժողովուրդ և grapho- գրել) կամ **ժողովրդագրությունը**՝ գիտություն է, որն ուսումնասիրում է
 - բնակչության թվաքանակը
 - բնակչության կազմը
 - բնակչության խտությունը, տարածքային բաշխումը
 - բնակչության միգրացիոն պրոցեսները
 - բնակչության վերարտադրությունը

Դեմոգրաֆիայի նպատակը

- ❖ **Նպատակը՝ դեմոգրաֆիան գիտականորեն հիմնավորում է միջոցառումների համակարգը, որն ուղղված է ժողովրդագրական պրոցեսների բարելավմանը:**
- ❖ **Ժողովրդագրական պրոցեսների օպտիմիզացիան նպաստում է ոչ միայն ժողովրդագրական ցուցանիշների (թվաքանակը, կառուցվածքը) օպտիմալացմանը, այլև բնակչության առողջական վիճակի բարելավմանը:**

Դեմոգրաֆիա

- ❖ **Դեմոգրաֆիկ ցուցանիշներն անհրաժեշտ են՝**
 - բնակչության առողջական վիճակի ուսումնասիրության և գնահատման համար
 - ամբողջ առողջապահության համակարգի պլանավորման համար
 - տարբեր ծրագրերի արդյունավետության գնահատման և
 - ընդհանուր առմամբ առողջապահության համակարգի գործունեության գնահատման համար:

Դեմոգրաֆիա

- Ժողովրդագրությունն ուսումնասիրում է բնակչությունը բնութագրող հինգ հիմնական պրոցեսները
- 1. ծնելիություն
- 2. մահացություն
- 3. ամուսնություն / ամուսնալուծություն
- 4. միգրացիա (տեղաշարժ)
- 5. սոցիալական շարժունություն

Դեմոգրաֆիայի տեղեկատվության աղբյուրները

- **Բնակչության մարդահամար՝**
 - “մեծ” մարդահամար (համատարած, միամուճեմտ հետազոտություն), իրականացվում է յուրաքանչյուր 10-ը տարին մեկ անգամ
 - “փոքր” մարդահամար (ընտրովի, միամուճեմտ հետազոտություն), իրականացվում է “մեծ” մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում՝ 5-ը տարին մեկ անգամ

- **Կյանքի իրադարձությունների գրանցում**
 - Մահ
 - Ծնունդ
 - Ամուսնություն / ամուսնալուծություն
- **Հատուկ հարցումներ**

Դեմոգրաֆիայի ուսումնասիրման բաժինները

- ❖ **Բնակչության ստատիկա՝** բնակչության կայուն, անփոփոխ վիճակն է ժամանակի տվյալ պահին:
- **Ստատիկան ուսումնասիրում է՝**
 - բնակչության թվաքանակը
 - բնակչության բնակեցման խտությունը ($կմ^2$)
 - բնակչության կառուցվածքը՝ մի շարք հիմնական հատկանիշներով (տարիք, սեռ, ռասայական և էթնիկական խմբեր, բնակեցման տեղը, սոցիալական խմբեր, կրթական մակարդակ և այլն):

Դեմոգրաֆիայի ուսումնասիրման բաժինները

❖ **Դինամիկա-** ուսումնասիրում է բնակչության շարժը ժամանակի ընթացքում:

Բնակչության դինամիկան ընդգրկում է՝

- բնակչության մեխանիկական (տարածքային) շարժը
- բնակչության բնական շարժը (վերարտադրություն)
- բնակչության սոցիալական շարժը (ուղղահայաց միգրացիա)՝ մարդկանց տեղափոխություններն են մի սոցիալական խմբից մյուսը՝ կրթական, մասնագիտական և այլն:

Աշխարհի բնակչությունը

Տարի	Թվաքանակ (մլն.)	Միջին տարեկան աճը (%)
1800	978	0.4
1850	1262	0.5
1900	1650	0.6
1950	2526	1.1
1960	3037	1.79
1975	4066	1.89
2000	6055	1.34
2005	6464	1.3
2015	7361	1,13

Մարդահամարները և Հայաստանի բնակչության թվաքանակը (հազ.)

- 1920 թ. - 720.0
- 1926 թ. - 780.0
- 1937 թ. - տվյալներ չկան
- 1939 թ. - 1282.3
- 1959 թ. - 1763.0
- 1970 թ. - 2491.9
- 1979 թ. - 3030.7
- 1989 թ. - 3236.0
- 2001 թ. - 3002.8
- 2011 թ. - 3213.0

Բնակչության կրկնապատկման համար անհրաժեշտ տարիների թիվը

Կատեգորիա	Բնական աճի ցուցանիշ %	Բնակչության կրկնապատկման համար անհրաժեշտ տարիների թիվ
Ստացիոնար	0	-
Դանդաղ	<0.5	>139
Չափավոր	0.5-1.0	139-70
Արագ	1.0-1.5	70-47
Շատ արագ	1.5-2.0	47-35
“Պայթուցիկ”	2.0-2.5	35-28
-	2.5-3.0	28-23
-	3.0-3.5	23-20

Բնակչության կառուցվածքը

- Տարիքը
- Սեռը
- Կրթությունը (գրագիտությունը)
- Ռասան, ազգությունը
- Բնակեցման վայրը (քաղաք/ գյուղ)
- Սոցիալական դասերը, խմբերը
- Կրոնը և այլն

Բնակչության տարիքային կառուցվածքը

- Տարիքային խմբերը`
 - 0-14 տարեկան (I խումբ)
 - 15-49 տարեկան (II խումբ)
 - >50 տարեկանից (III խումբ)

Եթե (I) = (III) – բնակչության ստացիոնար տիպ

(I) > (III) – առաջադեմ բնակչություն կամ
պրոգրեսիվ տիպ

(I) < (III) – հետադեմ բնակչություն կամ
ռեգրեսիվ տիպ

Բնակչության հարաբերական ծերացում

- **1-ին սանդղակ - 60 տարեկան և > տարիքի անձանց տեսակարար կշիռը.**
 - 12% և ավելի՝ բնակչության դեմոգրաֆիկ ծերացում
 - 18-20%՝ բնակչության խորը ծերացում
- **2-րդ սանդղակ - 65 տարեկան և > տարիքի անձանց տեսակարար կշիռը.**
- 7% և ավելի՝ բնակչության դեմոգրաֆիկ ծերացում
- 10-11%՝ բնակչության խորը ծերացում

Բնակչության տարիքային կառուցվածքի օրինակներ

	Հնդկաստան	Հայաստան		
	1981թ.	2001թ.	2009թ.	
I խումբ –	40%	22.4%	18,6%	9%
II խումբ –	47%	45.5%	56,0%	
III խումբ –	13%	32.1%	25,6%	

Բնակչության հարաբերական ծերացման օրինակներ

Հայաստան

Տարիքը >60	5.8% (1939թ.)	13.7% (2001թ.)
	11.5% (1989թ.)	14.8% (2009թ.)

Տարիքը >65 10.4% (2009թ.)

Ռուսաստան >60 20.0% (2001թ.)` - պատկերավոր ասած` «ծերանոց է առանց սպասարկման անձնակազմի»

Տարեցների օգնության գործակից՝ 1955-2025

➤ Տարեցների օգնության գործակից՝ 65
և > տարիքի բնակչության տոկոսն է
20-64 տարեկան բնակչության թվից.

- 1955 – 10.5
- 1975 – 11.8
- 1995 – 12.3
- 2025 – 17.2

Բնակչության ծերացման հիմնական պատճառները

- Ծնելիության մակարդակի նվազումը՝ որպես հետևանք ավելանում է տարեցների տեսակարար կշիռը բնակչության շրջանում:
- Բնակչության մահացության նվազումը՝ որպես հետևանք ավելանում է տարեցների տեսակարար կշիռը:
- Էմիգրացիայի (արտագաղթի) ավելացումը՝ բնորոշ է երիտասարդ տարիքի անձանց:

Բնակչության ծերացման հետ կապված պրոբլեմները

- Դեմոգրաֆիկ պրոցեսների փոփոխություններ՝
 - ծնելիության ցուցանիշների նվազում
 - մահացության ցուցանիշների բարձրացում
- Հիվանդացության ցուցանիշների բարձրացում
- Հիվանդացության կառուցվածքի փոփոխություններ
- Առողջապահության պահանջների փոփոխություններ
- Սոցիալ-տնտեսական բեռնվածության ավելացում

Բնակչության կառուցվածքն ըստ սեռի

Տղամարդիկ / կանայք հարաբերակցությունը.
Աշխարհում (2010թ.)` 50.4% և 49.6%

Հայաստանում	Հնդկաստանում
1000 / 1070 (2003թ.)	1000 / 933 (2001թ.)
48% և 52%	1000 / 927 (1991թ. min)
48,5 % և 51,5 %(2010թ.)	1000 / 972 (1901թ. max)

ԽՍՀՄ-ում` 45% և 55%, պատերազմից հետո
տղամարդկանց դեֆիցիտ (21 մլն), 1945թ.

ՀՀ-ում տարբեր տարիքային խմբերում
 հարաբերակցությունն ըստ սեռի
 (կանանց թիվը 1000 տղամարդկանց հաշվով)

Տարի	Ընդամենը	<1 տ.	30-34 տ.	65+ տ.
2001	1058	845	992	1393

մինչև 1 տարեկանը հարաբերակցությունը ըստ սեռի կազմում էր.

1997թ. - 1000 / 887

2001թ. - 1000 / 845

Ըստ սեռի հարաբերակցության հետ կապված պրոբլեմները

- Չինաստան, Հնդկաստան, զարգացող երկրները - բնակչության շրջանում տղամարդկանց թվի ավելցուկ
- ք. Իվանովո (ՌԴ) – կանանց թվի ավելցուկ (տեքստիլ արդյունաբերություն)
- Փոփոխություններ ամուսնության/ամուսնալուծության պրոցեսներում
- Փոփոխություններ ծնելիության ցուցանիշներում
- Արտաամուսնական երեխաների թվի ավելացում (կանանց թվաքանակի ավելցուկի դեպքում)

Ըստ սեռի բնակչության քանակակազմի անհավասարության աղբյուրները

- Ըստ սեռի քանակակազմի հարաբերակցության կենսաբանական տարբերությունը ծնվածների շրջանում
- Երեխայի սեռի ընտրության հնարավորությունը
- Ըստ սեռի մահացության ցուցանիշների տարբերությունը
- Միգրացիա
- Օրենսդրություն (Չինաստան)
- Տնտեսական վիճակը (նվազագույն զարգացած երկրները)
- Պատերազմները (ԻՍՀՄ)

Բնակչության գրագիտություն (%)

Հնդկաստան

	Միջինում	Տղամարդ	Կին
1991թ.	52	64	39
2001թ.	65.4	75.9	54.1
2011թ.	74	82	65.5
Իրան` 2008թ.		83	

Քաղաքային բնակչության թվաքանակը տարբեր երկրներում

Աշխարհում՝ միջինում	45%
Հնդկաստանում	26%
Ճապոնիայում	77%
ԱՄՆ-ում	75%
ԻսՍՀՄ-ում	66%
Հայաստանում՝	
(1926թ.)	19%
(2001թ.)	64%
(2007թ.)	67%

Քաղաքային / գյուղական բնակչություն

- Պրոբլեմների յուրահատկությունը (հիվանդացության կառուցվածքի տարբերություններ - քաղաքային և գյուղական տիպեր)
- Համաճարակաբանական պրոբլեմներ
- Ծնելիություն (քաղաքային տիպ, գյուղական տիպ)
- Արտաամուսնական երեխաների թվի ավելացում
- Բուժօգնության կազմակերպման տարբեր մոտեցումներ

Բնակչության խտությունը (մարդ/կմ²)

Հնդկաստան

1941թ. - 103

1991թ. - 267

Հայաստան

1926թ. - 26

1989թ. - 112

2001թ. - 100

2010թ. - 110

Նահանգ Դելի՝ 2001թ. - 9294

Նահանգ Արունանչալ Փրադեշ՝ 2001թ.- 13

Ավստրալիա 2000թ. - 2

Բնակչության խտության պրոբլեմները

Նվազագույն խտություն



Խիստ բարձր խտություն



Բնակչության մեխանիկական շարժը՝ միգրացիա

- ❖ Բնակչության մեխանիկական շարժը (միգրացիան)՝ բնակչության թվաքանակի, կազմի և տեղաբաշխման փոփոխություններն են, կապված մարդկանց տարածքային տեղափոխությունների հետ
- ❖ Բնակչության միգրացիա՝
 - ըստ ժամանակի
 - ըստ տարածքային հատկանիշի
 - ըստ իրականացման եղանակի

Բնակչության միգրացիան՝ ըստ ժամանակի

- ❖ **Անվերադարձ**- բնակեցման տեղի մշտական փոփոխությամբ
- ❖ **Ժամանակավոր** - տեղափոխությունն բավականին երկարատև, բայց սահմանափակ ժամկետով
- ❖ **Սեզոնային** - տեղափոխություններ տարվա որոշակի ժամանակահատվածներում
- ❖ **Ճոճանակաձև** - կանոնավոր ուղևորումներ աշխատանքի կամ դասի, որոնք գտնվում են բնակեցման վայրի սահմաններից դուրս (տևողությունը՝ 24 ժամ):

Բնակչության միգրացիա՝ ըստ տարածքային հատկանիշի

❖ Արտաքին միգրացիա- մեկնում երկրի
սահմաններից դուրս

–արտագաղթ (Էմիգրացիա) - քաղաքացիների
մեկնումը իր երկրից այլ երկիր՝ մշտական
բնակեցման համար կամ երկարատև ժամանակով

–ներգաղթ (Իմիգրացիա) – քաղաքացիների մուտքը
այլ երկրից տվյալ երկիր

❖ Ներքին միգրացիա - տեղափոխություններ
երկրի ներսում

–միջրջանային տեղափոխություններ

–ուրբանիզացիա

Բնակչության միգրացիան՝ ըստ իրականացման եղանակի

- ❖ **Կազմակերպված**- պետական և հասարակական կառույցների մասնակցությամբ և օգնությամբ
- ❖ **Տարերային** - միգրանտների ուժերով և միջոցներով
- ❖ **Բռնագաղթ (դեպորտացիա)** - բռնի ուժով, արտաքսում
- ❖ **Հայրենադարձություն (ռեպատրիացիա)** – վերադարձ պատմական հայրենիք քաղաքացիության վերականգնումով

Միգրացիայի հետ կապված պրոբլեմները

- Համաճարակաբանական
- Բնակչության թվաքանակի սեզոնային փոփոխություններ
- Ներգաղթածների (իմիգրանտների) բարձր հիվանդացություն
- Հիվանդացության յուրահատկություն
- Հարմարվողականության և հետհարմարվողականության (ադապտացիա/ռեադապտացիա) պրոբլեմներ
- Տրավմատիզմ (ճոճանակաձև միգրացիայի դեպքում)

Բնակչության բնական շարժը

- ❖ Բնակչության բնական շարժը՝ բնակչության թվաքանակի փոփոխությունն է, պայմանավորված
 - ծնելիությամբ,
 - մահացությամբ,
 - ամուսնությունների և ամուսնալուծությունների դինամիկայով:

Բնակչության վերարտադրության պրոցեսը բնութագրող ցուցանիշները

Բնակչության վերարտադրությունը – դա սերունդների փոխարինման անընդմեջ պրոցես է, որը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով (գործակիցներով):

- ❖ ծնելիության ընդհանուր ցուցանիշ
- ❖ պտղաբերության ընդհանուր ցուցանիշ
- ❖ տարիքային պտղաբերության ցուցանիշ
- ❖ ամուսնական պտղաբերության ցուցանիշ
- ❖ պտղաբերության գումարային ցուցանիշ
- ❖ պտղաբերության բրուտտո (կամ կոպիտ) ցուցանիշ
- ❖ պտղաբերության նետտո (կամ մաքուր) ցուցանիշ

Բնակչության ծնելիությունը

- ❖ Ծնելիությունը՝ որոշակի ժամանակահատվածում մարդկանց կոնկրետ ամբողջության մեջ որդեծնության պրոցես է
- ❖ Ուսումնասիրվում է ծննդյան ակտերի հիման վրա, որոնք գրանցվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում (ՅԱԴՇ)

Ծնելիության ընդհանուր ցուցանիշ

- ❖ Ծնելիության ընդհանուր ցուցանիշ
տվյալ օրացուցային տարում կենդանի ծնվածների
թիվն է 1000 մարդու հաշվարկով

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Տարվա ընթացքում կենդանի ծնվածների ընդհանուր թիվ} \times 1000}{\text{Բնակչության միջին տարեկան թվաքանակ}}$$

Ծնելիության մակարդակի գնահատման սանդղակ՝

- < 15‰ - ցածր մակարդակ
- 15- 25‰ - միջին մակարդակ
- > 25 ‰ - բարձր մակարդակ

Ընդհանուր պտղաբերության ցուցանիշ

Կնոջ համար պտղաբեր տարիք է համարվում 15-49

Ընդհանուր պտղաբերության ցուցանիշ՝ տարվա ընթացքում կենդանի ծնված երեխաների թիվն է պտղատու տարիքի 1000 կնոջ հաշվով

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Տարվա ընթացքում կենդանի ծնվածների ընդհանուր թիվ x1000

Պտղատու տարիքի կանանց միջին տարեկան թիվ

Տարիքային պտղաբերության ցուցանիշ

Տարիքային պտղաբերության ցուցանիշ՝ տվյալ տարիքի կանանց շրջանում կենդանի ծնված երեխաների թիվն է նույն տարիքի 1000 կնոջ հաշվարկով

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Տարվա ընթացքում տվյալ տարիքի կանանց շրջանում կենդանի ծնվածների ընդհանուր թիվ x 1000
Տվյալ տարիքի կանանց միջին տարեկան թիվ

Տարիքային պտղաբերության ցուցանիշի հաշվարկի համար կանանց ողջ պտղատու տարիքը պայմանականորեն բաժանում են 5-ամյա տարիքային խմբերի՝

15-19, 20-24, 25-29, 30-34, 35-39, 40-44, 45-49

Ամուսնական պտղաբերության ցուցանիշ

❖ Ամուսնական պտղաբերության ցուցանիշը՝
ամուսնացած կանանց շրջանում կենդանի ծնված
երեխաների թիվն է՝ 1000 ամուսնացած կանանց
հաշվարկով

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝
ամուսնացած կանանց շրջանում կենդանի ծնված
$$\frac{\text{երեխաների թիվը} \times 1000}{\text{ամուսնացած կանանց թիվը}}$$

Պտղաբերության գումարային ցուցանիշ

Պտղաբերության գումարային ցուցանիշ (ՊԳՑ)՝ ողջ պտղատու ժամանակաշրջանում 1 կնոջ կողմից ծննդաբերած երեխաների միջին թիվն է, եթե վերարտադրության տենդենցները մնում են կայուն

$$\text{ՊԳՑ} = \frac{\sum S \text{ ՊՑ} \times 5}{1000}$$

ՊԳՑ = 2.1 – համարվում է վերարտադրության փոխարինման մակարդակ

➤ ՊԳՑ-ի արժեքները տարբեր երկրներում՝

Հունաստան, Իսպանիա՝ 1.3 (2013),

Յեմեն – 7.6 (1997), 4.3 (2013).

Չադ – 6.3 (2013)

Հայաստան 1.6 (2013)

ՊԳՑ-ի փոխարինման մակարդակով երկրների տեսակարար կշիռը

Տարի	< 2.1	> 2.1
1955	0.1%	99.9%
1975	21%	79%
1995	45%	55%
2025 (նպատակը)	76%	24%

ՊԳՑ-ի օրինակներ

Երկիր	1997	2025	Երկիր	1997	2025
ԱՄՆ	2.0	2.1	Իրան	4.8	2.1
Կանադա	1.6	2.0	Օման	7.2	4.1
Ավստրիա	1.4	1.7	Մալդիվներ	6.8	2.5
Հայաստան	1.7	2.0	Նիգերիա	7.1	4.0
Բելառուս	1.4	1.7	Հնդկաստան	3.1	2.1
Չինաստան	1.8	2.1	Վենեսուելա	3.0	2.1
Շվեդիա	1.2	1.5	Եթովպիա	7.0	4.0

Վերարտադրության բրուտտո ցուցանիշ

- ❖ Վերարտադրության բրուտտո ցուցանիշը (ՎԲՑ) – ողջ պտղատու ժամանակաշրջանում 1 կնոջ կողմից ծննդաբերած աղջիկ երեխաների միջին թիվն է, եթե վերարտադրության միտումները մնում են կայուն Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝
$$\text{ՎԲՑ} = \text{ՊԳՑ} \times 49\% \text{ կամ } \text{ՊԳՑ} \times 0.49$$

Վերարտադրության նետտո ցուցանիշ

❖ Վերարտադրության նետտո ցուցանիշը (ՎՆՑ) – ողջ պտղատու ժամանակաշրջանում 1 կնոջ կողմից ծննդաբերած աղջիկ երեխաների միջին թիվն է, որոնք հետագայում կմասնակցեն վերարտադրության պրոցեսին

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՎՆՑ} = \text{ՎԲՑ} \times 78\% \text{ կամ } \text{ՎԲՑ} \times 0.78$$

Պոտենցիալ կորուստների աղբյուրները

- Աղջիկների մահը մինչ պտղատու տարիքին հասնելը (շուրջ 5-7%)
- Ամլուրթյուն (շուրջ 5-7%)
- Չամուսնացածներ (շուրջ 5-7%)
- Գումարային կորուստներ՝ շուրջ 20-22%

Վերարտադրության տիպերը

- $\text{ՎՆՑ}=1.0$ – պարզ վերարտադրություն
Բնակչության թվաքանակը կայուն է
- $\text{ՎՆՑ} > 1.0$ – ընդլայնված վերարտադրություն
Բնակչության թվաքանակի ավելացում
- $\text{ՎՆՑ} < 1.0$ – նեղ վերարտադրություն
Բնակչության թվաքանակի նվազում

Ծնելիության վրա ազդող գործոնները

- Կրոնական (ԲելՖաստ), ազգային սովորույթներ (Եզդիներ)
- Հոգեբանական
- Կենսաբանական (առաջնածինների տարիքը, բազմապտուղ հղիություն, Հայաստանում՝ 2%)
- Բժշկական (կանանց առողջությունը)
- Սոցիալ-տնտեսական
- Ամուսնական տարիք
- Օրենսդրություն

Ծնելիության վրա ազդող հոգեբանական գործոնները

- Մանկական (մինչև 1 տարեկան) մահացության մակարդակ (փոխարինման ծնելիություն)
- Առաջնեկի սեռ
- Առաջին / նախորդ հղիությունների կամ ծննդաբերությունների բարդություններ
- Առաջնեկի / նախորդ երեխայի առողջության և/կամ խնամքի հետ կապված խնդիրներ
- Ընտանեկան մթնոլորտ

Ծնելիության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնները

- Կնոջ կրթական մակարդակը (ավելի պատասխանատու որոշում)
- Աշխատանքը, հասարակական ակտիվությունը
- Ընտանիքի կայունությունը (ամուսնություն/ամուսնալուծություններ հարաբերություն)
 - ❑ Ռուսաստանում ընտանիքների 30% լիարժեք չեն 34%-ն ունեն մեկ երեխա 1 500 000 ծնունդներից 400 000 արտասամուսնական են (2005)

Ծնելիության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնները

➤ Աբորտների մակարդակը

Ռուսաստանում՝ 1.7 մլն աբորտներ, 1.5 մլն ծննդաբերությունների դիմաց

Հայաստանում՝

(1975թ.) 72.3 /100 ծննդաբերության դիմաց

(2000թ.) 38.7 /100 ծննդաբերության դիմաց

(2014թ.) 27.5 /100 ծննդաբերության դիմաց

➤ Եկամուտը

Դրական նշանակություն ունի 2-րդ երեխայի համար Բացասական է որոշակի մակարդակից հետո

Ծնելիություն՝ քաղաքային/գյուղական տիպեր

- Քաղաքային տիպ - հիմնականում, առաջնեկներ և երկրորդ երեխաներ, մոր տարիքը մինչև 25-30 տարեկան

ԱՄՆ, Ճապոնիա, Անգլիա՝ 70% առաջնեկներ և երկրորդներ

Ռուսաստանում՝ 50% առաջնեկներ

- Գյուղական տիպ – մեծամասնությամբ 3-րդ և ավելի երեխաներ, մոր տարիքը – 40-ից բարձր
Մեքսիկա, Տիլիպիններ, Եգիպտոս՝

25% երեխաները - 5-րդ և ավելի,

Առաջնեկներն ու երկրորդները՝ <50%

Ծնելիության հսկողություն

Երկու խնդիր՝ խթանում և զսպում

- Զարգացած երկրներ - Ֆրանսիայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Գերմանիայի փորձը
- Չինաստան - 2012թ. բնակչության թվաքանակի կայունացում և աստիճանաբար նվազում
- Հնդկաստան - 2025 կդառնա աշխարհում ամենամարդաշատ երկիրը
- Ծնելիության հսկողության բարդություն՝ Հնդկաստանում և նմանատիպ երկրներում

Բնակչության մահացությունը

- ❖ **Բնակչության մահացությունը** - որոշակի ժամանակահատվածում բնակչության թվաքանակի բնական կրճատման պրոցես է՝ ի հաշիվ մահվան դեպքերի:
- ❖ **Մահացության ուսումնասիրության** ժամանակ, որպես բժշկական փաստաթուղթ, օգտագործվում է «Մահվան բժշկական վկայականը», որը լրացվում է բուժող բժշկի, իսկ հանկարծամահության դեպքում՝ դատա-բժշկական փորձագետի կողմից:

Մահվան բժշկական վկայական

Մահվան պատճառը՝

- Անմիջական պատճառը
- Հիմնական հիվանդությունը, որը բերել է անմիջական պատճառի զարգացմանը
- Ընդհանուր համակարգային հիվանդությունը, որի արդյունքը հիմնական հիվանդությունն է հանդիսանում
- ✓ Ուղեկցող հիվանդություններ, որոնք կարող էին բարդացնել և ծանրացնել հիմնական հիվանդության ընթացքը

Մահացության ցուցանիշները

- Մահացության ընդհանուր ցուցանիշ
- Տարիքային մահացություն
- Մահացություն՝ ըստ սեռի
- Մահացություն՝ ըստ պատճառների
- Մահացության կառուցվածք
- Մահաբերություն (ոչ դեմոգրաֆիկ ցուցանիշ)
- Մանկական մահացություն՝ մինչև 1 տարեկան
- Մանկական մահացություն՝ մինչև 5-տարեկան
- Մայրական մահացություն

Մահացության ընդհանուր ցուցանիշ (ՄԸՑ)

Տարվա ընթացքում բոլոր պատճառներից
մահերի ընդհանուր թիվը ` 1000 մարդու
հաշվարկով

$$\text{ՄԸՑ} = \frac{1 \text{ տարում մահերի ընդհանուր թիվ}}{\text{Բնակչության միջին տարեկան թիվ}} \times 1000$$

ՄԸՑ գնահատականը `

- <9‰ – ցածր
- 9-15‰ – միջին
- >15‰ – բարձր

Մահացության ընդհանուր ցուցանիշ

- Քիչ կիրառելի է որևէ համեմատությունների համար, քանի որ դրա մակարդակը հիմնականում կախված է բնակչության տարիքային կազմի առանձնահատկություններից:
- Առավել ստույգ են բնակչության առանձին տարիքային, սեռատարիքային խմբերի ցուցանիշները:

Մահացության ցուցանիշներ

- ❖ **Մահացության տարիքային ցուցանիշ -**
տվյալ տարիքում (կամ
տարիքային խմբում՝ 5-ամյա)
մահացածների թիվն է՝ տվյալ տարիքի 1000
բնակչի հաշվարկով

Տվյալ տարիքում մահացածների թիվ x 1000


Տվյալ տարիքի բնակչության միջին տարեկան թվաքանակ

- ❖ **Մահացության ցուցանիշն ըստ սեռի -**
տվյալ սեռի մահացածների թիվն է՝
տվյալ սեռի 1000 բնակչի հաշվարկով

Տվյալ սեռի մահացածների թիվ x 1000

Տվյալ սեռի բնակչության միջին տարեկան թվաքանակ

Մահացության տարիքային ցուցանիշի մակարդակը



Մահացուլթյան մակարդակի տարբերություններն ըստ սեռի

- ❖ Տղամարդկանց մահացուլթյան ցուցանիշները միջինում 10-12%-ով բարձր են
- ❖ Տղամարդկանց սպասվող կյանքի միջին տևողությունը 6-8 տարով քիչ է
- ❖ Տղամարդկանց տարիքային ցուցանիշները գերազանցում են գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացի ամենաբարձր տարիքային խմբից
 - Կենսաբանական
 - Կենսակերպ
 - Մասնագիտություն, ռազմական կոնֆլիկտներ
- ❖ Ռուսաստանում տղամարդկանց կյանքի միջին տևողությունը 57 տարի է, իսկ կանանցը՝ 71 տարի:



Մահացության ցուցանիշներ

- ❖ **Մահացության ցուցանիշն` ըստ մահվան պատճառների (օրինակ, ՍԱՀ)- ՍԱՀ-ից մահացածների թիվը` 100 հազ. բնակչի հաշվարկով**

$$\frac{\text{Տարվա ընթացքում ՍԱՀ մահերի թիվը} \times 100000}{\text{Բնակչության միջին տարեկան թիվը}}$$


- ❖ **Մահացության կառուցվածքն` ըստ մահվան պատճառների – տվյալ տարում կոնկրետ հիվանդությունից մահացածների թվի տոկոսային հարաբերությունն է մահացածների ընդհանուր թվին**

Մահացության կառուցվածքն աշխարհում (%) 2002թ.

Ինֆեկցիոն հիվանդություններ	14 967 000	26.2
Վիճակներ՝ կապված հղիության հետ	510 000	0.9
Պերինատալ վիճակներ	2 464 000	4.3
Սննդի անբավականություն	475 000	0.8
Չարորակ նորագոյացություններ	7 106 000	12.5
Սրտանոթային հիվանդություններ	16 655 000	29.2
Նյարդա-հոգեկան հիվանդություններ	1 105 000	1.9
Էնդոկրին հիվանդություններ	1 230 000	2.1
Այլ ինֆեկցիոն հիվանդություններ	7 328 000	12.3
Վնասվածքներ	5 188 000	9.1
Ընդամենը	57 027 000	100


Մահվան հիմնական պատճառները՝ Կախված զարգացման մակարդակից, 1997թ.

Զարգացած երկրներ



- Ինֆեկցիոնային
- Սրտանոթային
- Զրկազույգ
- Սրտանոթային
- Սրտանոթային
- Բնածնային և մայրություն
- Բնածնային և մայրություն
- Բնածնային և մայրություն

Զարգացող երկրներ



Մահաբերության ցուցանիշ

Տվյալ հիվանդությունից մահերի թիվն է տվյալ հիվանդությանը 100 հիվանդների հաշվարկով

$$\frac{\text{Տվյալ հիվանդությունից մահերի թիվ} \times 100}{\text{տվյալ հիվանդությանը հիվանդների թիվ}}$$

Մահաբերության ցուցանիշը բնութագրում է հիվանդության ծանրությունը և չի հանդիսանում դեմոգրաֆիկ ցուցանիշ

Մայրական մահացուլթուն

- Կնոջ մահն է, որն անկախ տևողութունից և տեղակայունից պայմանավորված է հղիությամբ և առաջացել է հղիության ժամանակ կամ նրա ավարտից հետո 42 օրվա ընթացքում որևէ պատճառից, որը կապված է հղիության, նրա բարդությունների կամ վարման հետ, **բայց ոչ դժբախտ պատահարներից կամ պատահական առաջացած պատճառից:**
- Մայրական մահացության ցուցանիշը հաշվարկվում է **100 000 կենդանի ծնվածների հաշվով**
 - Կանադա, Շվեդիա – 4-7/100 000
 - ԱՄՆ – 14/100 000;
 - Ռուսաստան – 25/100 000
 - Ավստրալիա – 6/100 000
 - Աֆրիկյան երկրներ (առավել աղքատ) – 870/100 000
 - Հայաստան – 26/100 000
 - Հնդկաստան – 200/100 000
 - Ռումինիա – 32/100 000


Մայրական մահացուլթյուները ՀՀ-ում

Տարի	Ցուցանիշ	Բացարձակ թիվ
1996	19.8	9
1999	30.5	11
2000	71.1	25
2003	19.2	7
2004	37.2	14
2007	15.0	6
2010	6.7	3
2012	23.5	10
2013	19.1	8
2014	18.6	8

Մայրական մահացուլթյուն

- Մայրական մահացուլթյան ընդհանուր ցուցանիշից բացի, ուսումնասիրվում է նաև մահացուլթյունն ըստ մահվան պատճառների, ինչը թույլ է տալիս մշակել միջոցառումներ մոր և մանկան պահպանման համակարգի աշխատանքի կատարելագործման ուղղությամբ:

Մայրական մահացուության պատճառները



Մայրական մահացուության վրա ազդող սոցիալական գործոններ

- Տարիքը ծննդաբերության ժամանակ
- Ծննդաբերությունների թիվ
- Հաճախակի հղիություններ
- Ընտանիքի չափ
- Ոչ բավականաչափ սնունդ
- Աղքատություն
- Գրագիտություն
- Ոչ բավարար ծննդօգնության ծառայություն
- Ծննդօգնություն տատմայրերի օգնությամբ
- Կապի միջոցների և տրանսպորտի հասանելիություն
- Սոցիալական սովորույթներ և ավանդույթներ

Մանկական մահացություն

- Մահացության տարիքային ցուցանիշների մեջ հատուկ տեղ են գրավում
 - մանկական մահացություն՝ մինչև 1 տարեկան երեխաներ
 - մանկական մահացություն՝ մինչև 5 տարեկան երեխաներ
- Մանկական մահացության ցուցանիշը արձագանքում է բժշկա-սոցիալական գործոնների փոփոխություններին, այն հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, առողջապահության համակարգի գործունեության, բնակչության առողջության և ընդհանուր բարեկեցության գնահատման չափանիշ
- Մանկական մահացությունը գերազանցում է բոլոր մյուս տարիքային խմբերի ցուցանիշներին, բացի 60 և բարձր տարիքի բնակչության:

Մանկական մահացության ցուցանիշ

Հաշվարկվում է հետևյալ բանաձևերով
ՄՄՑ՝

$$\frac{\text{Մինչև 1 տարեկան մահացած մանուկների թիվ} \times 1000}{\text{Տվյալ տարում կենդանի ծնվածների թիվ}}$$

ՄՄՑ (ըստ Ռատոցի)՝

$$\frac{\text{Կյանքի 1-ին տարում մահացած մանուկների թիվ} \times 1000}{\text{տվյալ տարում կենդանի ծնվածների 2/3 + նախորդ տարում կենդանի ծնվածների 1/3}}$$

Սովորաբար մինչև 1 տարեկան բոլոր մահացածների շուրջ 2/3-ը ծնվում է տվյալ օրացուցային տարում, իսկ 1/3-ը՝ նախորդ

Մանկական մահացության գնահատականը

Մանկական մահացության ցուցանիշի
գնահատման սանդղակ

- < 30 ‰ - ցածր մակարդակ
- 30-50 ‰ - միջին մակարդակ
- > 50 ‰ - բարձր մակարդակ


“Առողջություն բոլորի համար” ԱՀԿ գլոբալ
ռազմավարության նպատակները (2000).

- Սպասվող կյանքի միջին տևողությունը - >60-ից
- Մանկական մահացության ցուցանիշ - < 50-ից
- 0-5 տարեկանների մահացության ցուցանիշ - < 70-ից

Մանկական մահացուության ցուցանիշներ

Երկիր	1997		2025	
	մինչև 1տ.	մինչև 5տ.	մինչև 1տ.	մինչև 5տ.
Հնդկաստան	73	90	38	45
Հայաստան	22	27	17	19
Իրան	39	57	15	20
Ճապոնիա	4	6	4	6
Շվեդիա	5	6	5	6
Ռուսաստան	19	36	16	19
Լիբերիա	160	200	52	65

Մանկական մահացուության ցուցանիշը ՀՀ-ում (1000 կենդանի ծնունդի հաշվարկով)



Նեոնատալ մահացուլթյան ցուցանիշ

- Հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Տվյալ տարում մինչև 28 օրական հասակում
մահացած երեխաների թիվ x 1000
Տվյալ տարում կենդանի ծնվածների թիվ

- Առավել դժվար է ենթարկվում նվազեցման
- Ավելի բարձր է տղաների մոտ
- Ուղղակիորեն կախված է ծնվելու ժամանակ մարմնի զանգվածից և գեստացիոն տարիքից
- Մանկական մահացուլթյան ոչ բարձր մակարդակի պարագայում **նեոնատալ մահացուլթյան տեսակարար կշիռը հարաբերորեն բարձր է**

Մանկական մահացության ցուցանիշներ

❖ Վաղ նեոնատալ մահացություն

Տվյալ տարում մինչև 7 օրական հասակում
մահացած երեխաների թիվ x 1000
Տվյալ տարում կենդանի ծնվածների թիվ

❖ Ուշ նեոնատալ մահացություն

Տվյալ տարում կյանքի 7-28 օրականում
մահացած երեխաների թիվ x 1000

Կենդանի ծնվածների թվից – կյանքի 0-7-օրականում
մահացածների թիվ

❖ Հետնեոնատալ մահացություն

Տվյալ տարում կյանքի 2-12 ամիսներին
մահացած երեխաների թիվ x 1000

Կենդանի ծնվածների թվից – կյանքի 0-28 օրերին
մահացածների թիվ

Մանկական մահացուության

ցուցանիշներ

❖ Պերինատալ մահացություն

- Անտենատալ
- Ինտրանատալ
- Նեոնատալ


$$\frac{\text{Պտղի մահ (գետաացիայի 22 շաբաթ և բարձր)} + \text{վաղ նեոնատալ}}{\text{Կենդանի և մահացած ծնվածների թիվ}} \times 1000$$

❖ Մեռելաճնություն

Պտղի մահ՝ զանգվածը >1000 գ (համարժեք է հղիության 22 շաբաթին) և հասակը >35 սմ

$$\frac{\text{>1000գ զանգվածով մահացած պտուղների թիվ} \times 1000}{\text{Կենդանի ծնվածների թիվ} + \text{>1000գ զանգվածով մահացածներ}}$$

Մանկական մահացություն Ժամանակաշրջան



Մանկական մահացությանը նպաստող գործոնները

➤ Կենսաբանական

- ✓ Ջանգվածը ծնվելուց
- ✓ Մոր տարիքը
- ✓ Ծննդաբերության հերթական համարը
- ✓ Ծննդաբերությունների միջև ինտերվալը
- ✓ Բազմապատուղ ծննդաբերությունները
- ✓ Երեխայի սեռը
- ✓ Վաղաժամ ծննդաբերությունները

➤ Սոցիալական, մշակութային

- ✓ Արհեստական կերակրելը
- ✓ Կրոն, սոցիալական խմբեր
- ✓ Վաղ ամուսնություններ
- ✓ Մայրության որակը
- ✓ Մոր կրթությունը
- ✓ Առողջապահության որակը և մատչելիությունը
- ✓ Ոչ լրիվ ընտանիքներ
- ✓ Դաժան սովորույթներ

Մանկական մահացության պատճառները

➤ Նեոնատալ

- ✓ Ասֆիքսիա
- ✓ Ատելեկտազ
- ✓ Բնածին արատներ
- ✓ Ծննդաբերության վնասվածքներ
- ✓ Պլացենտայի և պորտալարի վիճակներ
- ✓ Նորածինների հեմոլիտիկ հիվանդություն
- ✓ Փայտացում
- ✓ Ինֆեկցիոն հիվանդություններ

➤ Հետնեոնատալ

- ✓ Դիարեա
- ✓ Սուր ռեսպիրատոր հիվանդություններ
- ✓ Վնասվածքներ, թունավորումներ
- ✓ Թերսնուցում
- ✓ Բնածին արատներ
- ✓ Այլ ինֆեկցիոն հիվանդություններ

Մանկական մահացության կառուցվածքը

Մանկական մահացություն - 100%

Նեոնատալ – 40-60% ընդհանուրից

Վաղ նեոնատալ – 70% նեոնատալից

1^{ին} օր – 40% վաղ նեոնատալից

Պերինատալ մահացուության պատճառներն ու կառուցվածքը

➤ Ջարգացած երկրներում պերինատալ մահացուության հիմնական պատճառները՝ ծննդաբերական վնասվածքներ, նորածինների հեմոլիտիկ հիվանդություն, պլացենտայի և պորտալարի վիճակները (50-60%)

- Անտենատալ – 39-40%
- Ինտրանատալ – 46-47%
- Յետնեոնատալ – 15%

Բնակչության բնական աճը

❖ Բնական աճը = տարվա ընթացքում ծնվածների թվից – նույն ժամանակահատվածում մահացածների թիվը

Բնական աճի ցուցանիշ՝

ծնելիության ցուցանիշ – մահացության ցուցանիշ
կամ

$$\frac{(\text{ծնվածների թիվ} - \text{մահացածների թիվ}) \times 1000}{\text{Բնակչության միջին տարեկան թիվ}}$$

Դեմոգրաֆիկ ցիկլ

- **Բարձր ստացիոնար ստադիա**՝ մահացությունն ու ծնելիությունը բարձր են (Աֆրիկայի մի շարք երկրներ)
- **Ընդլայնվող ստադիա**
 - վաղ - մահացությունը սկսում է նվազել, բայց ծնելիությունը մնում է բարձր (Չարավ-ասիական երկրներ)
 - ուշ – շարունակվում է մահացության հետագա նվազումը և սկսում է արտահայտվել ծնելիության նվազեցմանն ուղղված տենդենցը (Սինգապուր)
- **Ցածր ստացիոնար ստադիա**՝ ծնելիությունն ու մահացությունը ցածր են և գրեթե հավասար են (Եվրոպական երկրներ)
- **Անկում**՝ երբ ծնելիությունը մահացությունից ցածր է – դեպոպուլյացիա (Ռուսաստան, Վրաստան).

Կյանքի սպասվող միջին տևողություն

❖ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, առողջապահության համակարգի, ընդհանուր բարեկեցության և բնակչության առողջության առավել կարևոր ցուցանիշներից է

❖ Տարբերություններն ըստ սեռի

✓ զարգացած երկրներ – կանայք ապրում են ավելի երկար

✓ Նեպալ, Մալդիվներ – տղամարդիկ ապրում են ավելի երկար

✓ Հնդկաստան, Բանգլադեշ – գրեթե հավասար

❖ ԱՅԿ նպատակն է՝ ոչ պակաս 60 տարեկանից:

Կյանքի սպասվող միջին տևողությունը որոշ երկրներում (World Bank 2013)

Երկիրը	Տղամարդ	Կին	Ընդհանուր	Կարգը
Հայաստան	71	78	75	78
Ավստրալիա	80	84	82	3
Հնդկաստան	66	69	68	95
Իրան	74	76	75	83
Ճապոնիա	80	76	83	1
Շվեյցարիա	81	85	83	2
ԱՄՆ	77	81	79	47
Լեսոտո	49	50	49	191
Սյերա-Լեոնե	50	51	50	192

Բնակչության հիվանդացության ուսումնասիրությունը

Հանրային առողջության և
առողջապահության մեթոդ
2016

Հիվանդացության ուսումնասիրման նշանակությունը

- Հիվանդացությունը և հաշմանդամությունը՝ հանրային առողջության բնութագրման հիմնական ցուցանիշներն են և կիրառվում են.
 - բնակչության առողջության վիճակի գնահատման համար
 - առողջապահության հիմնարկների և ընդհանուր առմամբ ողջ համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման համար
 - առողջապահության պլանավորման համար
 - բնակչության առողջության հետ կապված պահանջների գնահատման համար

Հիվանդացության ուսումնասիրման մեթոդները

- Ըստ ծավալի
 - **համատարած**՝ անհրաժեշտ է ինֆեկցիոն հիվանդացության ուսումնասիրության համար
 - **ընտրովի**՝ կիրառվում է ոչ ինֆեկցիոն հիվանդացության ուսումնասիրության համար
- Ըստ առանձին խմբերի
 - Տարիքային (երեխաներ, դեռահասաներ, մեծահասակներ)
 - Մասնագիտական
 - Սեռային
 - Հիվանդությունների (ՄԱՀ, չարորակ նորագոյացություններ և այլն)

Հիվանդագրության ցուցանիշներ

- **Բուն հիվանդագրության ցուցանիշ**
(առաջնային հիվանդագրության ցուցանիշ)
- **Հիվանդելիության ցուցանիշ**
(հիվանդությունների տարածվածության ցուցանիշ)
- **Ախտաբանական ախտահարվածության ցուցանիշ**

Բու՛ն հիվանդացության ցուցանիշ

- Բու՛ն հիվանդացության ցուցանիշը՝ (առաջնային հիվանդությունը) վերաբերվում է տվյալ օրացուցային տարում առաջին անգամ գրանցված դեպքերին, որոնց կապակցությամբ հիվանդը նախկինում չի դիմել բժշկական հիմնարկություն:
- **Հաշվարկի բանաձև**
Առաջին անգամ գրանցված
հիվանդությունների դեպքերի թիվ x K
ռիսկի ենթարկվող բնակչության միջին տարեկան թիվ
K- գործակից, որի արժեքը կախված է հետազոտվող հիվանդության տարածվածությունից (սովորաբար 1000-100 000)

Բուն հիվանդագության ցուցանիշ

- Ստացվում է միայն կոհորտային հետազոտությունների հիման վրա
- Չանդիսանում է հիվանդության առաջացման ռիսկի հիմնական ցուցանիշ
- Կարող է հաշվարկվել ողջ բնակչության կամ առանձին խմբերի համար (սեռատարիքային, մասնագիտական և այլն)

Հիվանդելիության ցուցանիշ

- Հիվանդելիության ցուցանիշը (հիվանդության տարածվածությանը) ավելի լայն հասկացություն է, քան բուն հիվանդացությունը
- Ընդգրկում է տվյալ տարվա ընթացքում գրանցված հիվանդությունների բոլոր դեպքերը (այսինքն ինչպես տվյալ տարում առաջին անգամ գրանցված, այնպես էլ նախորդ տարիների ընթացքում հայտնաբերված ու գրանցված հիվանդության դեպքերը, որոնց կապակցությամբ այս տարի հիվանդը նորից դիմել է բժշկական հիմնարկ)

Հիվանդելիության ցուցանիշ

Հաշվարկի բանաձև.

Տվյալ օրացուցային տարում գրանցված
հիվանդությունների բոլոր դեպքերի թիվ $\times K$
Բնակչության ընդհանուր թիվ


- Ցուցանիշն օգտագործվում է հիվանդությունների բեռը հաշվելու համար և առողջապահության համակարգի պլանավորման նպատակով:

Ախտաբանական ախտահարվածության ցուցանիշ

- Ախտաբանական ախտահարվածության ցուցանիշը ընդգրկում է հիվանդությունների կամ ախտաբանական վիճակների բոլոր այն դեպքերը, որոնք բացահայտվում են պրոֆիլակտիկ բժշկական քննությունների ժամանակ:
- **Հաշվարկի բանաձև.**
Ժամանակի տվյալ պահին հետազոտվողների մոտ հայտնաբերված հիվանդությունների և մինչկլինիկական վիճակների դեպքերի թիվ $\times 1000$
Ժամանակի տվյալ պահին հետազոտման մեջ ընդգրկված անձանց թիվ
- Ցուցանիշը հաշվարկվում է լայնակի կտրվածքով հետազոտության տվյալների հիման վրա

Բուն հիվանդացություն և հիվանդելիություն

- Երկու ցուցանիշները կապված են միմյանց հետ
- Բնակչության թվի կայունության դեպքում հիվանդելիության ցուցանիշը հավասար է բուն հիվանդացության և հիվանդության տևողության արտադրյալին
- Բուն հիվանդացության բարձրացումն ուղեկցվում է հիվանդելիության ցուցանիշի բարձրացումով
- Ինչքան ավելի ցածր է մահաբերությունն, այնքան բարձր է հիվանդելիությունը (նյարդահոգեկան հիվանդություններ)



Հիվանդելիության վրա ազդող հիմնական գործոններ

- Բուն հիվանդացության մակարդակի փոփոխություն
- Մահաբերության մակարդակի փոփոխություն
- Ընտրողական միգրացիա (օրինակ, որոշակի հիվանդությամբ հիվանդի մեկնումն այլ բնակավայր)
- Առաջնային և երկրորդային պրոֆիլակտիկայի ռազմավարություն (օրինակ, պոլիոմիելիտի դեմ պատվաստումներ և այլն)

Հիվանդացության ուսումնասիրման հիմնական աղբյուրներ

- Հիվանդացությունը ըստ դիմելիության ուսումնասիրվում է ԲՊՀ-ում բժշկական փաստաթղթերի տվյալների հիման վրա (**պասիվ մեթոդ**)
- Հիվանդացությունը ըստ կանխարգելիչ բժշկական քննությունների արդյունքների ուսումնասիրվում է պրոֆիլակտիկ քննությունների տվյալների հիման վրա (**ակտիվ մեթոդ**)
- Լրացուցիչ աղբյուրներ
 - ըստ մահվան պատճառների վերլուծության՝ ուսումնասիրվում է մահվան բժշկական վկայականների հիման վրա
 - ըստ համալիր սոցիալ-հիգիենիկ հետազոտությունների տվյալների

Հիվանդացության ուսումնասիրությունը ըստ դիմելիության

- Առավելություններ`
 - հեշտ է, համեմատաբար էժան
 - մաքսիմալ տեղեկություն սուր հիվանդությունների մասին
- Թերություններ`
 - ոչ լիարժեք տեղեկություն հիվանդացության մասին
 - կախվածություն մի քանի գործոններից (բուժօգնության մատչելիություն, բնակչության ակտիվություն և այլն)
 - քրոնիկական հիվանդությունների ուշ հայտնաբերում

Ըստ դիմելիության հիվանդացության ուսումնասիրության տեսակները

- ամբողջատոր-պոլիկլինիկական հիվանդացություն
- ստացիոնար կամ հոսպիտալացված հիվանդացություն
- կարևոր ոչ էպիդեմիկ հիվանդություններով հիվանդացություն
- համաճարակային կամ ինֆեկցիոն հիվանդացություն
- ժամանակավոր անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացություն

Ընդհանուր, կամ ամբողջատոր- պոլիկլինիկական հիվանդացուլթյուն

- **Յիմնական վիճակագրական
փաստաթուղթը՝ եզրափակիչ
/ճշտված/ ախտորոշման
վիճակագրական կտրոնն է, որը լրացվում է
տվյալ հիվանդուլթյան կապակցուլթյամբ հիվանդի
առաջին այցելուլթյան ժամանակ**

Ստացիոնար կամ հոսապիտակացված հիվանդացություն

- Հիմնական վիճակագրական փաստաթուղթը՝ ստացիոնարից դուրս գրվածի քարտն է, որը լրացվում է դուրս գրված կամ մահացած յուրաքանչյուր հիվանդի վերաբերյալ:
- Առավել կարևոր նշանակություն ունեցող ցուցանիշներ՝
 - հոսապիտակացման մակարդակի ցուցանիշ
 - հոսապիտակացվածների կառուցվածքի ցուցանիշ
 - մահճակալի վրա հիվանդի գտնվելու միջին տևողության և բուժման արդյունավետության ցուցանիշ

Կարևոր ոչ էպիդեմիկ հիվանդություններով հիվանդացություն

- **Ջիմնական վիճակագրական փաստաթուղթն է՝ հաղորդումը** կարևոր ոչ էպիդեմիկ հիվանդության մասին (տուբերկուլոզ, ՍՃՓՅ, օնկոլոգիական հիվանդություններ, թմրամոլություն և տոքսիկոմանիա)

Համաճարակային կամ ինֆեկցիոն հիվանդացություն

- Հիմնական վիճակագրական փաստաթուղթն է՝ **շտապ հաղորդման քարտը** սուր վարակիչ հիվանդության մասին, որն ունի և ահազանգման, և օպերատիվ վիճակագրական նշանակություն
- Հիվանդացության ուսումնասիրման մեթոդը ըստ ծավալի՝ համատարած հետազոտություն է

Ժամանակավոր անաշխատունակությանը ուղեկցվող հիվանդացություն

- Հիմնական վիճակագրական փաստաթուղթը՝ **Ժամանակավոր անաշխատունակության թերթիկն է**, որը լրացվում է ժամանակավոր անաշխատունակության յուրաքանչյուր դեպքի համար և ունի բժշկավիճակագրական, իրավաբանական ու ֆինանսական նշանակություն

Ժամանակավոր անաշխատունակության ուղեկցվող հիվանդացության ցուցանիշները

- 100 աշխատողին ընկնող անաշխատունակության դեպքերի թիվը
- 100 աշխատողին ընկնող անաշխատունակության օրերի թիվը
- Անաշխատունակության մեկ դեպքի միջին տևողությունը
- Անաշխատունակության պատճառների կառուցվածքը
- Հիվանդացածների տեսակարար կշիռն աշխատողների ընդհանուր թվում
- Անաշխատունակության կրկնելիության ցուցանիշ

Հիվանդացության ուսումնասիրությունը ըստ բժշկական քննությունների արդյունքների

- Առավելությունները`
 - ամենալիարժեք աղբյուրն է
 - ախտաբանական վիճակների վաղաժամ հայտնաբերում
- Թերությունները
 - ծախսատար է
 - կատարվում է բնակչության առանձին խմբերի կամ առանձին հիվանդությունների համար
 - ոչ լիարժեք տեղեկություն սուր հիվանդությունների մասին

Բժշկական քննությունների տեսակները

1. **Նախնական** - տրվում է առողջության գնահատական աշխատանքի ընդունվելուց առաջ մասնագիտական պահանջներին համապատասխանության որոշման համար
2. **Պարբերական** – կիրառվում է մասնագիտական հիվանդությունների կամ թունավորումների վաղ հայտնաբերման համար, ինչպես նաև հիվանդությունների, որոնք պատճառաբանորեն կապված չեն տվյալ մասնագիտության հետ, բայց որոնց համար տվյալ մասնագիտական վնասակարությունների հետ շփումը վտանգավոր է

Բժշկական քննությունների տեսակները

3. Նպատակային՝ նշանակված է մի շարք հիվանդությունների (քաղցկեղ, գինեկոլոգիական հիվանդություններ, տուբերկուլոզ և այլն) վաղ հայտնաբերման համար:

Նպատակային քննությունն անցկացվում է

–միամուենտ հետազոտությունների

ձևով՝ կազմակերպված կոլեկտիվներում կամ բարձր ոչսկի խմբերում

–ընթացիկ ձևով՝ բուժհիմնարկներ դիմած բոլոր անձանց զննմամբ


Հիվանդացության ուսումնասիրությունը ըստ դիմելիության և բժշկական քննությունների արդյունքների

a) Շրջված այսբերգ՝ Հիվանդությունների դեպքերի թիվը ըստ դիմելիության գերակշռում է բժշկական քննությունների ժամանակ հայտնաբերված դեպքերի թիվը


b) Այսբերգ- հիվանդությունների մեծամասնությունը հայտնաբերվում է բժշկական քննությունների ժամանակ, ի սկսիվոր մասը – ըստ դիմելիության տվյալների

➤ Որքան մոտ են այս երկու աղբյուրների տվյալները, այնքան ավելի լավ է գնահատվում առողջապահական հիմնարկների գործունեությունը

a)



b)



Հիվանդացության ուսումնասիրությունը ըստ մահվան պատճառների վերլուծության

Առավելությունները

- տեղեկատվական է կարճատև ընթացքով մահաբեր հիվանդությունների ուսումնասիրման ժամանակ
- տեղեկատվական է հանկարծամահության պատճառների ուսումնասիրման համար
- բնութագրվում է ախտորոշման բարձր ճշտությամբ

Թերությունները

- տեղեկատվական չէ ոչ մահաբեր և մահաբեր, բայց երկարատև ընթացքով հիվանդությունների ուսումնասիրման ժամանակ
- հիվանդացությունն ուսումնասիրվում է ուշացումով
- հնարավորություն չի ընձեռնվում ժամանակին հայտնաբերել քրոնիկ հիվանդությունները

Հիմնական վիճակագրական փաստաթուղթը՝ մահվան բժշկական վկայական

Հաշմանդամություն

• **Հաշմանդամություն`** օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարմամբ առողջության խախտումներով պայմանավորված սոցիալական անբավականություն է, որը բերում է մարդկանց կենսագործունեության սահմանափակմանը և հետևապես, սոցիալական պաշտպանության անհրաժեշտությանը:

• **Հաշմանդամության խմբեր**

I խումբ - մշտական կամ երկարատև անաշխատունակությամբ անձինք, որոնք ունեն մշտական խնամքի կարիք

II խումբ - մշտական կամ երկարատև անաշխատունակությամբ անձինք, որոնք **չունեն** մշտական խնամքի կարիք

III խումբ - անձինք, որոնք կորցրել են ըստ մասնագիտության աշխատելու կարողությունը, բայց ունակ են կատարել այլ աշխատանք

Հաշմանդամության հիմնական ցուցանիշներ

- առաջնային հաշմանդամության ցուցանիշ
- առաջնային հաշմանդամության հաճախականության ցուցանիշ՝ ըստ հաշմանդամության խմբերի
- հաշմանդամության կառուցվածքը՝ ըստ հաշմանդամության խմբերի
- հաշմանդամության ընդհանուր (կուտակված) ցուցանիշ
- մանկուց հաշմանդամների տեսակարար կշիռ

Հիվանդությունների միջազգային դասակարգում /ՀՄԴ/

I փորձ -Մորգան (1760 թ.)՝ հիվանդությունների
դասակարգումը տեղակայման սկզբունքով:
Բոլոր հիվանդությունները բաժանվում էին **5 դասի**.

- գլխի հիվանդություններ
- կրծքավանդակի հիվանդություններ
- որովայնի հիվանդություններ
- մարմնի այլ մասերի հիվանդություններ
- վիրաբուժական հիվանդություններ

Հիվանդությունների միջազգային դասակարգում /ՀՄԴ/

II փորձ՝ Ֆարր (1840 թ.)՝ հիվանդությունների
դասակարգումը պատճառագիտական
սկզբունքով:

Բոլոր հիվանդությունները բաժանվում էին **5 դասի**.

- ինֆեկցիոն հիվանդություններ
- կոնստիտուցիոնալ հիվանդություններ
- տեղային հիվանդություններ
- արտաքին ազդակներից առաջացած
հիվանդություններ
- բնածին արատներ

Հիվանդությունների միջազգային դասակարգում /ՀՄԴ/

III փորձ՝ Բերտիլյոններ (1893 թ.)

հիվանդությունների դասակարգումը
ըստ տեղակայման և պատճառագիտական
սկզբունքների, որն ընդունվեց որպես
միջազգային դասակարգում:

- 1960 թվականից նշված սկզբունքներին
ավելացվեծ պաթոգենետիկ սկզբունքը

ՀՄԴ՝ նշանակությունը

- Ապահովում է հիվանդությունների միասնական անվանակարգումը
- Միասնական մոտեցում է ցուցաբերվում հիվանդությունների ուսումնասիրման ու վերլուծության հարցում
- Նպաստում է տարբեր երկրների միջև բժշկագիտական ինֆորմացիայի փոխանակմանը

ՀՄԴ-10

- ՀՄԴ վերանայվում է ԱՀԿ-ի կողմից՝ միջին հաշվով 10 տարին մեկ անգամ
- 1993 թվականից օգտագործվում է ՀՄԴ-10 վերանայումը՝ “Հիվանդությունների, վնասվածքների և մահվան պատճառների վիճակագրական դասակարգում”
- 10-րդ վերանայման ՀՄԴ-ում հիվանդություններն ու ախտաբանական վիճակները նշագրվում են տառաթվային կոդերով
- ՀՄԴ- 10 բաղկացած է 3 հատորից.
 - 1-ին հատոր՝ դասակարգում
 - 2-րդ հատոր՝ ձեռնարկ
 - 3-րդ հատոր՝ այբենական ցանկ

ՀՄԴ-10

- դասակարգման հիմքում ընկած են մի քանի սկզբունքներ, օրինակ
- I դաս- Վարակիչ և մակաբուժական որոշ հիվանդություններ /A00-B99/ - **պատճառագիտական սկզբունք**
- II դաս- Նորագոյություններ /C00-D48/- **պարթոգենետիկ սկզբունք**
- X դաս – Շնչառական օրգանների հիվանդություններ /J00-J99/ - **տեղակայման սկզբունք**
- XV դաս – Հղիություն, ծննդաբերություն և հետծննդաբերական շրջան /000-099/ - **հատուկ վիճակներ**

ՀՄԴ-10

- Բոլոր հիվանդությունները բաժանվում են 21 դասի, որոնք նշագրվում են տառանիշ կոդերով
- Յուրաքանչյուր դասը բաժանվում է բլոկերի
- Յուրաքանչյուր բլոկը բաժանվում է մինչև 10 ռուբրիկաների
- Յուրաքանչյուր ռուբրիկան բաժանվում է քառանիշ ենթառուբրիկաների:
- Ենթառուբրիկանների թիվը հասնում է 5000 (ըստ հիվանդությունների թվի):

ՀՄԴ-10, Օրինակ

- Դաս XI - Մարսողական օրգանների հիվանդություններ (K00-K93)

տեղակայման սկզբունք

K35-K38- Ապենդիքսի հիվանդություններ (բլոկ)

K35- Սուր ապենդիցիտ (ռուբրիկա)

«ենթառուբրիկաներ»

K35.0 - Սուր ապենդիցիտ՝ տարածուն որովայնամզաբորբով

K35.1- Սուր ապենդիցիտ՝ որովայնամզային թարախակույտով

K35.9- Սուր չճշտված ապենդիցիտ

ՀՄԴ-10, Օրինակ

- I դասը- Վարակիչ և մակաբուժական որոշ հիվանդություններ /A00-B99/ - **պատճառագիտական սկզբունք**
- (A00-A09) Աղիքային վարակիչ հիվանդություններ
- (A00)-Խոլերա
- A00.0 - Խոլերայի վիբրիոն 01, բիովար cholerae–ից առաջացած խոլերա
- A00.1- Խոլերայի վիբրիոն 01, բիովար eltor–ից առաջացած խոլերա
- A00.9 – Չճշտված խոլերա

Հիվանդության զարգացման ռիսկի գնահատումը

Հանրային առողջության և
առողջապահության միջին
2016

Ի՞նչ է ռիսկը

Ռիսկի գործոնների մասին տեղեկությունների օգտագործման նպատակները

- Ռիսկը դա դեպքի հանդիպման հավանականությունն է
- Ռիսկի գործոնների մասին տեղեկությունների օգտագործման նպատակները՝
 - Հիվանդությունների կանխարգելում
 - Հիվանդացության և հիվանդելիության մակարդակի կանխագուշակում
 - Հիվանդությունների ախտորոշում
 - Հիվանդության անհայտ էթիոլոգիաի դեպքում նրա պատճառի որոշումը

Հիվանդության զարգացման պատմությունը

Ռիսկի գործոններ —> Հիվանդություն —> Ելք
կանխարգելում *բուժում*

Ռիսկի չափորոշիչները

- ❖ Առանց հստակ համեմատության
 - Բացարձակ ռիսկ
- ❖ Հստակ համեմատությունով
 - Հարաբերական ռիսկ
 - Շանսերի հարաբերությունը
 - Ատրիբուտիվ ռիսկ

Բացարձակ ռիսկ /ԲՌ/

- Բացարձակ ռիսկը` դա տվյալ ժամանակաընթացքում հիվանդության զարգացման ռիսկն է
- Բացարձակ ռիսկը նույնն է, ինչ բնակչության բուն հիվանդացության մակարդակը
- Բացարձակ ռիսկը = Տվյալ հիվանդությունը ձերքբերած մարդկանց թիվը/ Ընդհանուր բնակչության թիվը, որը գտնվում է ռիսկի տակ

Բացարձակ ռիսկ

- Օրինակ՝ ճարպակալության և դիաբետի զարգացման միջև եղած կապի ուսումնասիրման նպատակով կատարվել է կոհորտային հետազոտություն, որի արդյունքները բերված են ներքոհիշյալ աղյուսակով

Բացարձակ ռիսկը = Տվյալ հիվանդությունը ձերքբերած մարդկանց թիվը / Ընդհանուր բնակչության թիվը

Բացարձակ ռիսկը ճարպակալություն ունեցողների մոտ = $= 80/400 * 100\% = 20\%$

Բացարձակ ռիսկը ստուգիչ խմբում = $20/500 * 100\% = 4\%$

	Դիաբետով հիվանդներ	Անձինք առանց դիաբետի	ԲՌ
Ճարպակալություն ունեցողներ	80	320	20%
Ճարպակալություն չունեցողներ	20	480	4%

Բացարձակ ռիսկ

- Ցույց է տալիս ուսումնասիրվող ռիսկի տարածվածությունը տվյալ գործոնի ազդեցությանը ենթարկվածների խմբում, բայց հաշվի չի առնում հիվանդության զարգացման ռիսկը ուսումնասիրվող գործոնի ազդեցությանը չենթարկվածների խմբում
- Հնարավորություն չի տալիս որոշել, արդյոք գործոնի ազդեցությունը կապված է տվյալ հիվանդության զարգացման ռիսկի բարձրացման հետ, թե ոչ
- Բացարձակ ռիսկի հիման վրա կարելի միայն ենթադրություն անել համեմատվող խմբերի միջև եղած տարբերության մասին
- Կարող է ունենալ կարևոր նշանակություն կլինիկական և հանրային առողջության ռազմավարության մշակման հարցերում

Հարաբերական ռիսկ /ՀՌ/

- Հարաբերական ռիսկը ցույց է տալիս՝ քանի անգամ է ռիսկի գործոնի ազդեցությունը բարձրացնում տվյալ հիվանդության զարգացման ռիսկը
- Հարաբերական ռիսկը՝ դա ազդեցությանը ենթարկվածների խմբի բացարձակ ռիսկի հարաբերությունն է չենթարկվածների խմբին:

$$\text{ՀՌ} = \frac{\text{Ազդեցությանը ենթարկվածների խմբում հիվանդության զարգացման բացարձակ ռիսկ}}{\text{Ազդեցությանը չենթարկվածների խմբում հիվանդության զարգացման բացարձակ ռիսկ}}$$

Հարաբերական ռիսկ

Օրինակ՝ ճարպակալության և դիաբետի զարգացման միջև եղած կապի ուսումնասիրման նպատակով կատարվել է կոհորտային հետազոտություն, որի արդյունքները բերված են ներքոհիշյալ աղյուսակով

ՀՌ = Ազդեցությանը ենթարկվածների խմբի ԲՌ / Ազդեցությանը չենթարկվածների խմբի ԲՌ

$$\text{ՀՌ} = 0.20 / 0.04 = 5$$

Ճարպակալությամբ հիվանդների մոտ դիաբետի զարգացման հնարավորությունը 5 անգամ ավելի բարձր է, քան ճարպակալություն չունեցողների մոտ

	Դիաբետով հիվանդներ	Անձինք առանց դիաբետի	ԲՌ
Ճարպակալություն ունեցողներ	80	320	20%
Ճարպակալություն չունեցողներ	20	480	4%

Հարաբերական ռիսկ

- Հարաբերական ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ է իմանալ բուն հիվանդացության ցուցանիշների արժեքները, որոնք ինչպես հայտնի է ստացվում են միայն կոհորտային հետազոտությունից: Այսինքն, հարաբերական ռիսկը ցույց է տալիս ոչ միայն հատկանիշների միջև եղած հարաբերության առկայությունը, այլև նրանց միջև եղած պատճառաբանական կապը:

Շանսերի հարաբերությունը /ՇՀ/

- Շանսերի հարաբերությունը ցույց է տալիս ռիսկի գործոնի և հիվանդության կամ արդյունքի միջև եղած կապի աստիճանը: Դա «դեպքերի» խմբում երևույթի դրսևորման շանսի հարաբերությունն է «ստուգիչ» խմբում երևույթի առաջացման շանսի նկատմամբ`

